

L. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՑԻՆ ԱԻՍՏԵՄԸ ՄԱՆՂՈԼԱԿԱՆ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃՐՁԱՆՈՒՄ

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ Գիտուրյաւմների
Ակադեմիայի 1948 թ. № 7 «Տեղեկագրից»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

9(47.925)

27178

F-12

Բաբոյան, Լ

ամրագիտ հարկացին սրբություն
պահապահութեան բյան 252-

9(47.925)16

ԱՏՈՒԹՅԱՆ Է 1951 թ. 7

Բ-12

Խելան Բարայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մոնղոլական տիրապետությունը հայաստանում, մեր կարծիքով, պետք է բաժանել երեք շրջանի։ Առաջին շրջանն ընդգրկում է արշավանքներն ու վերջնական նվաճումները, մինչև առաջին աշխարհագիրը՝ 1253—54 թ.թ., երկրորդ շրջանը՝ առաջին աշխարհագրից մինչև Ղազան-Խանի ռեֆորմները 1290-ական թվականները և երրորդ շրջանը Ղազան-Խանի տիրապետության ու հետագա տարիները մինչև Լենկ-Թեմուրի արշավանքները։ Այս բաժանումը մենք անում ենք, ելակետ ունենալով տնտեսական կյանքում կատարված որոշ փոփոխություններ, որոնք սակայն ներկայիս հասկացողությամբ, չպետք է ընդունել որպես հեղաշրջիչ մոմենտներ՝ իրենց լայն բռվանդակությամբ։

Նվաճողների քաղաքականությունը, նրանց տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, քաղաքական կյանքի ասպարեզում ընդհանրապես անփոփոխ է մնացել, բացառությամբ նվաճումների ու արշավանքների շրջանից, ուստի մոնղոլական տիրապետության ժամանակամիջոցը երեք շրջանների բաժանելը կատարված է տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հիման վրա։

Արշավանքներն ու ասպատակությունները, որոնք հիմնականում կատարվում էին կողոպուտի ու ավարի նպատակով, ընդհանրապես տևեցին մոտ քառորդ դար։ Մոնղոլ նվաճողների համար եկամուտի նախկին այդ աղբյուրները՝ ավարը, կողոպուտը, չէին կարող մի մեծ պետության ֆինանսավորման ու տնտեսական ապահովության մշտական աղբյուրը հանդիսանալ։ Հետևապես և մոնղոլները ստեղծեցին հարկաֆինանսական մի դաժան սիստեմ՝ նվաճված երկրները սիստեմատիկաբար կեղեցելու, նրանց տնտեսական-կենսական հյութերը քամելու, և մոնղոլական հսկայական պետություն համար նյութական անհրաժեշտ բազա ապահովելու նպատակով։ Նրանք վարում էին աննախընթաց ծանր հարկային քաղաքականություն։

«Պետության տնտեսական հիմքը կազմում են հարկերը», ասում է ինգելսը, խոսելով ընդհանրապես պետության մասին, «պետության գոյությունը տնտեսապես արտահայտված հարկերի մեջ է կայանում»¹

Մարքսն ասում է.

«Նվաճելով երկիրը, նվաճողների համար ամենամերձավոր խնդիրը միշտ էլ եղել է յուրացումը և մարդիկ»²

Մոնղոլական խաների, խանողիների, նրանց կանանց, հոգևորականությանը, բանակին, Մարքսի խոսքերով՝ «հեքիաթային այդ ըոլոր արա-

¹ К. Маркс и Ф. Энгельс—Сочинения, т. б, стр. 215.

² К. Маркс—«Капитал», т. III, гл. 47, стр. 696, в примечании,

բածներին¹ պահելու համար անհրաժեշտ էին նյութական միջոցներ և այդ միջոցները նըանք տեսնում էին նվաճված երկրների ու ժողովուրդների տնտեսական շահագործման մեջ, իրենց տնտեսական քաղաքականության մեջ—բաղմաթիվ ու բազմատեսակ հարկերի ու տուրքերի գանձման մեջ:

Մոնղոլները գանձում էին ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկեր: Ուղղակի հարկերն էին հողահարկը, զլխահարկը, գույքային հարկը, անասնահարկը և այլն: Լենինը կապիտալիստական հասարակարդի մասին խոսելիս, ուղղակի հարկերը համարում է հարկերի հնադույն ձեզ:²

«Անուղղակի հարկերը,—գրում է Լենինը,—համարվում էին այնպիսի հարկերը, որոնք ուղղակի չեն վերցվում հողից կամ տնտեսությունից, այլ ժողովրդի կողմից վճարվում էին անուղղակի ձեռվ...»:³

Անուղղակի հարկերը Լենինը համարում է ռամենաանարդարացի հարկերը:⁴ Մոնղոլական էպոխայի հարկերի տեսակների կոնկրետ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նվաճված ժողովրդից գանձվող անուղղակի հարկերը մի քանի անգամ գերազանցել են ուղղակի հարկերին, և որ իսկապես նըանք իշխողների համար հանդիսացել են կեղեքման ու չարաշահումների աղբյուր, ամենաանտանելի և ամենաղաժան միջոցներով:

Հարկերի կլասիֆիկացիան, ըստ հարկադրման սկզբունքի, եղել է համեմատական պրոգրեսիվ և ռեգրեսիվ: 1. Համեմատական է հարկադրումը այն դեպքում, երբ բոլոր եկամուտների վրա սահմանվում է հարկի միասնական չափի գրույք: 2. Պրոգրեսիվ հարկադրման դեպքում եկամուտների աճմանը զուղընթաց աճում է նաև հարկային գանձումների տոկոսը (այս պրոգրեսը կարող է լինել բարդ և պարզ): 3. Ռեգրեսիվ հարկադրման դեպքում հարկերը մեծ տոկոսով ընկնում են նվազ եկամուտների վրա:

Մոնղոլները Հայաստանում, ինչպես և ամենուրեք կիրառել են համեմատական ռեգրեսիվ հարկադրման սկզբունքը: Թերեւ այդ գրությունը մի փոքր փոխվում է Ղազան-Խանի տիրապետության շրջանում (1295—1304): Կարելի է ենթադրել, թե այս ժամանակ կիրառվել է համեմատական հարկադրման և որոշ չափով պրոգրեսիվ հարկադրման սկզբունքը (վերջինս իր պարզ ձևով): Մինչև Ղազան-Խանի ռեֆորմները, նվաճված երկրներում չկար միասնական հարկադրման չափ, ընդհանրապես բացակայում էր միասնական չափ ու կշռի հասկացողությունը: Պետության տարբեր շրջաններում գոյություն ունեին չափ ու կշռի տարբեր միավորներ, որ լայն ասպարեզ էր բացում մոնղոլական պաշտոններության կամայականությունների ու չարաշահումների համար: Ղազան-Խանի մտցըրած՝ մի շարք բարենորոգումները, պիտության մեջ միամսական չափի ու կշռի միավորի, հարկադրման միասնական չափի գրույքի հաստատման հարկահավաքման կայուն ժամկետների և այլնի մասին, երկար չտեսեցին: Փաստերը ցույց են տալիս, որ նրա հաջորդները երկու տասնյակ տարի անց, ստիսլված են լինում զբաղվելու նույն հարցերով, ինչպես օրինակ, Արու-Սահիդ-Խանը 1316—1332 թթ.: Մոնղոլական իշխանության հարկային ամբողջ քաղաքականությունը հիմնված էր կենտրոնական իշխանու-

¹ К. Маркс и ф. Энгельс—Сочинения. т. 5, стр. 215.

² В. Ленин—Сочинения, т. 5, стр. 294.

³ Նույն տեղում, стр. 295.

⁴ Նույն տեղում, стр. 294.

թյան կողմից կատարվող աշխարհագրերի վրա: Պետք է նկատենք, որ նվաճված երկրներում նրանց տնտեսական քաղսօքականությունը հիմնականում արտահայտվել է աշխարհագրերի կատարումով, որի մասին ժամանակակիցները դասնությամբ ու կոկիծով են խոսում:

Մեր պատմագրության մեջ պահպանված տեղեկությունները վերաբերում են, միայն 1253—54 թվին կատարված աշխարհագրին: Սակայն Ղազան-Խանի ոեփորմների բնույթն ու էությունը նկատի ունենալով, ենթադրում ենք, որ նրա ժամանակ էլ պետք է որ աշխարհագրի կատարված լիներ, որի մասին հայ պատմագրությունը ուղղակի տեղեկություններ չեն պահպանել: Հիմնվելով Միհիթոր Այրիվանեցու այն վկայության վրա, թե «Արզունն կրկին համարեաց զաշխարհա»¹, կարելի է ենթադրել, որ մասնակի աշխարհագրեր առանձին երկրներում և շրջաններում նույնպես կատարվել են: Ծուսաստանում այն երկու անգամ է կատարվել՝ 1236 և 1257 թվերին: Մեր պատմության մեջ առաջին աշխարհագրի մասին տարբեր վկայություններ կան:² Ըստ Վարդան Արևելցու այն կատարվել է 1253 թվին, իսկ ըստ Ստեփաննոս Օրբելյանի և Կիրակոս Գանձակեցու՝ 1254 թվին: Մեզ թվում է, որ մեր պատմիչների մոտ տարեթվերին վերաբերող այդ տարբերության պատճառը հետեւյալն է. աշխարհագրի անցկացման պրոցեսը Անդրկովկասում տեսել է երկու տարի, 1253 թվին այն կատարվել է Վրաստանում, հետեւաղես նաև Հայաստանի որոշ դավառներում և Աղբեցանի հյուսիս-արևելյան շրջաններում: Վարդան Արևելցին գուցե տալիս է այս թվականը: Իսկ Ստեփաննոս Օրբելյանը և Կիրակոս Գանձակեցին տվել են Հայաստանի կենտրոնական և հարավային շրջաններում կատարված աշխարհագրի թվականը:

Նվաճողներն առաջին աշխարհագրից հետո ամենուրեք հարկադրման ու հարկահավաքման բավականին մշակված սխառեմ մտցըին: Սակայն հարկադրման օրեկտի սկզբունքը տարբեր երկրներում՝ տարբեր միավորներով էր արտահայտվում: Եթե Ծուսաստանում հարկադրման միավորը հանդիսանում էր ծուխը, ապա Հայաստանում այդ միավորը անհատն էր՝ գլուխը:

* * *

Մոնղոլական պետության սխառեմում գոյություն ուներ երկու դիվան, ինչպես կենտրոնական՝ իշխանության մեջ՝ մեծ խանի մոտ, նույնպես և հետազում ստեղծված անկախ պետություններում, կառավարման դիվան և լեների՝ ավատների դիվան: Ռեշագրավ է այն հանգամանքը, որ պատմագրությունը ավելի շատ պահպանել է ոչ այնքան մոնղոլական տիրապետության շրջանի հիմնարկները, որքան հիմնարկները դեկավարողների՝ սահիբների, անունները:

«Արևելքում գործերը որոշում էր ոչ այնքան դիվանը, ծառայող

¹ Միքրաց Այրիվանեցի — «Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860 թ., էջ 68:

² Վարդան Բարձրաբերդցի — «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 195, Ստեփաննոս Օրբելյան — «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911 թ., էջ 412—413, Կիրակոս Գանձակեցի — «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1910 թ., էջ 348—352, Միքրաց Այրիվանեցի, էջ 67 և այլն:

փոքրիկ քարտուղարներից (գրավրերի-քիթարչի) կազմված հլու օբդանը, որքան պետը—«սահիբը»—պետական քարտուղարը¹:

Սահիբներ—պետական քարտուղարներ նշանակվում էին նաև տեղական տիրող իշխանների մոտ:

«... (Յեվ) հույժ մեծարեցաւ Սադունը Դաենի կողմից, և ի խնամակալություն ստացավ Թելավին ու Բելաքանն և բազում յերկրներ. և Սադունը բարվոք վարում էր Վրաստանի գործնրը... Յեվ Ավագ աթարակի մեծ Ս(ահ)իբ—դիւանը սրա (Դիմետրի) մօտ էր»²:

«Եւ տայ զդուստը նորա զԽոշաքն ի կնութիւն մեծ խօջային Սահիբ դիւանին, որ ունէր ի բոխն զամենայն աշխարհս տէրութեան Առպաղայ դանին, որ ասի լինել ըստ մեծի դաւթարի դիւանին համարս 150 դումանի, եւ մի դումանն մի բիւր է եւ նա էր դիւանի գլուխ եւ վերակացու ամենայնին»³:

Բնական է, որ լեների սիստեմով կառավարվող պետության մեջ հողերի վարչատնտեսական հաշվառումը պիտի հանդիսանար այդ պետության համար առաջնակարգ խնդիր: Սա ֆեոդալին հնարավորություն էր տալիս ապահովելունատուրալ, զրամական և զինվորական պարտավորությունները:

Հարկերի կանոնավոր ձևով զանձման համար հարկավոր էր կազմակերպել հաշվառում: Մեծ դիվանում կենտրոնացված էին բնակչության, անասունների և հողագործության վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Մոնղոլական տիրապետության շրջանում պետական պաշտոնեության ցանցը բավականին ընդարձակ էր և բազմատեսակ: Այդ պաշտոնեությունը հանդիսանում էր նվաճողների ամբողջ վարչատնտեսական քաղաքականության մարմնացումը: Կենտրոնական իշխանությունը դեկավարվելով իր շահերով, հետեւյալ քաղաքականությունն էր վարում: Աչքի առաջ ունենալով (տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հայաստանին) հայ-պարսկական և հայ-սելջուկ-արաբական թշնամական հարաբերությունները և կրոնական տարբեր դավանանքները, պետական գրեթե բոլոր պաշտոնյաները գործում էին պարսիկների և սելջուկ-արաբների (որոնց մեր մատենադիրները ընդհանուր անունով անվանում են տաճիկներ) միջոցով և նրանց աջակցությամբ:

«Նմանապէս եւ այս Բուղա եկեալ ի զօրսն թաթար, մտանէր ի տունսն աւագանւոյն, եւ զոր ինչ ախորժ թուէր իւրն՝ առնոյր անխնայ. և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա. զի ժողովեալ էր իւր արս սրիկայս ի Պարսից և ի Տաճկաց, որք անխնայ գործէին զգործ խակութեան, և թշնամիք էին առաւել քրիստոնէից...»⁴

«Քանզի Պարսիկ Տաճկահաւատք սպասաւորօք շրջէին»⁵

¹ Թիվունի գլուխ կանգնուծ պետը սամանիդների մոտ կոչվում էր սահիբ—տէր—պետ—աթարեկ. Գործեալ առաջարկությունը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 15-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 16-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 17-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 18-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 19-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 20-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 21-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 22-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 23-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 24-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 25-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 26-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 27-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 28-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 29-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 30-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 31-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 1-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 2-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 3-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 4-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 5-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 6-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 7-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 8-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 9-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 10-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 11-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 12-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 13-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 14-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 15-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 16-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 17-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 18-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 19-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 20-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 21-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 22-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 23-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 24-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 25-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 26-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 27-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 28-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 29-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 30-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 1-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 2-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 3-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 4-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 5-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 6-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 7-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 8-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 9-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 10-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 11-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 12-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 13-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 14-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 15-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 16-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 17-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 18-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 19-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 20-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 21-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 22-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 23-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 24-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 25-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 26-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 27-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 28-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 29-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 30-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 1-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 2-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 3-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 4-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 5-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 6-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 7-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 8-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 9-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատարվել է 1941 թ. մայիսի 10-ին. Առաջարկը պատճենաբանությունը կատ

«Արք Պալսիկը էին՝ ծարաւի արեան քրիստոնէից, նոքա առաւել կեղեքէին զկեանս մեր ամենայն տառապանօք»,¹

Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ երբ Բուղան կասկածում է Ավագ Զաքարյանի վրա (ապստամբությանը մասնակից լինելու մեջ), զորքով գալիս է Ավագի մոտ և նրա հարցին՝ «Զի՞նչ է այդ բազմութիւն զօրաց. միթէ ապստամբ իցես ի դանէն, և եկիր սպանանել զմեղ», Ավագը պատասխանում է. «Եւ դու ընդէ՞ր ժողովեցեր զբազմութիւն արանց չարագործաց Պարսից, եւ եկիր նենդիւ ըմբռնել զմեղ»² և այլն:

Ղազանի Խան դառնալու ժամանակ, ըստ Ռաշիդ-Աղ-Դինի վկայությունների, երկրի քայքայման պատճառը եղել են ոչ այնքան հարկերը, որքան նրանց դանձման ձևերը և ամեն տեսակի երաշխիքի բացակայությունը, որ բնակչության կողմից վճարված գումարները նույն այդ վճարողներից երկրորդ, երրորդ անգամ չեն դանձվի, Հաճախ գանձված հարկերը պահպան էին տեղերում և պետական գանձարան չէին ուղարկվում, որի հետեւ հարկեր չգանձած շրջանների շարքը: Գանձարանը մուծվելիք դրամների համար տրվում էր հատկացագիր (ասսիցիոն) համապատասխան գումարներ՝ ստանալու պայմանով: Իրականում չկատարված այդ հատկացումների վճարման պատրվակի տակ բնակչությունից նորից գանձվում էր դրամ: Նվաճված երկրների հողագործ բնակչության դրությունը չափազանց ծանր էր: Ռաշիդ-Աղ-Դինը այս մասին հետեւյալն է պատմում.

«Մի մարդ «բերատ» ստացավ (հրաման—իրավունք գյուղից հասույթ գանձելու) և զինված խմբի ուղեկցությամբ գյուղ գալով, այն դատարկ գտավ, միայն մի հրապարակում կային մարդիկ: Բերատ ունեցողը մոտենալով՝ հետեւյալ պատկերը տեսավ. աթոռի վրա նստել էր մի մարդ, որն այդ նույն գյուղի համար նույնպիսի բերատ էր ստացել, ինչպիսին ինքն էր ստացել: Նստած մարդու շուրջը կանգնած էին զինված մոնղոլները, իսկ նրանց առաջ կախված էին երեք գյուղացիք՝ ոտքերից, զլուխները զեալի ցած, որոնց անողոքաբար փայտերով ծեծում էին, որպեսզի նրանք խոստովանեն, թե ուր է գընացել գյուղի բնակչությունը, որոնցից պետք է հարկեր գանձվէին»:

Այսպիսով՝ փաստերը ցույց են տալիս, որ կիրառվող հարկահավաքման այդ ձևերը հանդիսացել են նվաճված երկրների տընտեսական քայքայման ու անկման զլխավոր, թերեւս առաջին պատճառը: Մաղաքիա Արեգան՝ նկարագրելով Արդունի կատարած աշխարհագիրը, զրում է.

«... Եւ այսպէս այլ աւերեցին զաշխարհն արեւելից, զի ի մի փոքր գեղն Ծ (50) մարդ համարէին, կամ I. (30) ի ժե (15) տարեկանէն ի վերն զամէնն համարէին մինչև կ (60) տարէկանն, եւ յամէն զլխոյ որ համարէին կ (60) սպիտակ առնուին. Եւ թէ ոք փախչէր կամ թաքչէր, յորժամ ըմբռնէին՝ կապէին անողորմ ձեռս ի յետս, եւ զալար գաւազանօք ծեծէին մինչ զի մարմինն ամենայն տըորէր եւ յարենէն շաղախէր, եւ ապա անողորմաբար զկատաղի շներն իւրեանց,

¹ Կիրակոս Գանձակեցի, Էջ 234:

² Նույն տեղում, Էջ 298:

³ Заходер—«История Восточного средневековья», Москва, 1944 г., стр. 114.

զոր սովորեցուցեալ էին ուտել միս մարդոյ ի ներս թողուին և ուտել տային զտառապեալ եւ զչունեւոր քրիստոնեայն...»¹:

Սամվել Անեցու ժամանակագրությունը շարունակողներից մեկը դըրում է:

«Սա (Խարբանդան)² եղեալ խարաճ առնուլ ի քրիստոնէից, և ոմանց ի մորթն կարեցին վասն աղքատութեան...»,³ Եվ այլն:

Համդալլահ Ղազվինին վկայում է, որ մոնղոլա-իրանական բոլոր շըրջաններից ստացվող հարկային ամբողջ եկամուտների գումարը (բացի Խորաստնից, որը ֆինանսական տեսակետից առանձնացված էր Պարսկաստանից), մինչև Ղազան-Խանը կազմում էր 1700 թուման⁴ (12,750,000 ռուբլի): Ղազան-Խանի ռեփորտներից հետո այդ գումարը հասավ 2100 թումանի (15,750,000 ռուբլի):⁵

Ղազվինին միհնույն ժամանակ նշում է, որ իր ժամանակ չէին կարողանում այդ գումարի կեսը հավաքել, քանի որ ժողովուրդը չէր կարողանում հավաքել իր բերքը և դրա պատճառը՝ ներքին անկարգություններն էին և զինվորական ջոկատների հաճախակի ասպատակությունները: Ղազվինու մոտ պահապանվել է Մեծ Հայաստանից գանձվող հարկերի ընդհանուր գումարը, որը կազմում էր 39 թուման (195,000 ռ.):⁶ Ղազվինին ասում է, որովհետեւ Հայաստանի հյուսիսային շրջանները մտնում էին Վրաստանի վարչական միավորման մեջ, ապա այդ շրջաններից գանձվող հարկերը մտնում էին Վրաստանից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ: Սա է պատմագրության մեջ պահպանված այն ուղղակի տվյալը, որը ցույց է տալիս Հայաստանում մոնղոլների կողմից գանձվող հարկերի հավաքական թիվը:

Նորավանքի 1275 թվի վիմական արձանագրության մեջ պահպանված է հետեւյալ վկայությունը:

«...Հալէձորոյ հարկն սահմանեցաք ի տարում վացսուն սպիտակ տայ, այլ աղատ է յամէն հարկաց. այլ ոչ ամիրայ (ոչ պարոն),⁷ ոչ ձեռնաւորի ոչ ինչ հաշիւ չկայ հետ Հալէձորոյ ոչ շոր տայ ոչ այլ ոչ ում...»⁸

Այստեղից թերեւ կարելի լինի ենթադրել, որ կապալով տրված հար-

¹ Մաղաքիա Արեդա—«Պատմութիւն վասն աղգին նետողաց», ո. Պետերբուրգ, 1870 թ. էջ 22:

² Ծանոթությունը մերն է.—Լ. Բ.:

³ Սամվել Անեցի—«Հաւաքմունք ի զրոց ողատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 165:

⁴ Թումանը Ղազվինու ժամանակ արժեր 5000 ռուբլի արծաթով, իսկ դինարը՝ 50 կոպեկ:

⁵ Бартольд—„Персидская надпись на стене Анийской Мечети Мануче“ С. Петербург, 1911 г., стр. 20.

⁶ Бартольд—«Персидская надпись...» стр. 24, Петрушевский II. П.—«Хамдуллах Казвии как источник по социально-экономической истории Восточного Закавказья», см. Известия Ак. Наук СССР, Отделение Общественных наук, 1937 г., № 4, стр. 898.

⁷ Կ. Ղաֆաղարյանի մոտ եղած լուսանկարում քարը ընկած է, նա հավանական է համարում, որ Շահիսթանյանցի ժամանակ զրված է եղել (ոչ պարոն), որից հետո քարը կարող է ընկած լինել

⁸ Կ. Ղաֆաղարյան—«Արձանագրությունների ժողովածու», անտիոք, ստուգված է ըստ լուսանկարի:

կելը կապալառուների կողմից հարկատու շրջաններից հավաքվում էին ամբողջացրած գումարով. գանձվող բոլոր տեսակի հարկերի ընդհանուր գումար էր սահմանվում ու գանձվում:

* * *

Մոնղոլական էպոխայում վարչական և հարկահան պաշտոնեության ներկայացուցիչները անվանվում էին «շահնահան», «մուխթասիր» (մուսայիր), «ամիրա», «ձեռնավոր» և այլն, որոնց մասին պատմագրությունը ուղղակիցուցմներ չի պահպանել: Հիմնվելով եղած վկայությունների վրա ակադեմ. Մանանդյանը, Գ. Հովսեփյանը և ուրիշները շատ ճիշտ եզրակացության են հանդել, որ սրանք քաղաքներում, շրջաններում և գյուղերում վարչական պաշտոնեության ներկայացուցիչներն էին օժտված հարկահավաքման իրավունքով: Սրանք ընակչությունից իրենց օգտին նույնպես հավաքում էին լրացուցիչ տուրքեր:

Մոնղոլական, աղնվականության օրեցօր աճող պահանջները և քայլաված գյուղից մեծ և կամուտներ ստանալու անհնարինությունը նրանց ստիպում են իրենց ֆինանսների կարգավորման հենարան դարձնել վաշխառությունը: Կենտրոնական իշխանությունը սիստեմ է դարձնում հարկերը կապալով տալը և այդ սիստեմը լայն կիրառում է դանում մոնղոլական էպոխայում: Հարկերը կապալով էին տալիս, ինչպես կենտրոնական իշխանությունը կամ իշխանությունը, նույնպես և տեղական իշխողները: Պետական դանձարան մտնող հարկերի գանձումը կապալով տրվում էր առևտրականներին, առևտրական ընկերություններին: Կապալառուն պարտավոր էր պետական գանձարանին սկզբից վճարել կապալով վերցրած որևէ երկրից կամ շրջանից գանձվող հարկի ընդհանուր գումարը: Այս հանգամանքը պարզ է, որ կապալառուին պիտի ստիպեր գործել այնպես, որպեսզի ինքը չտուժի: Հարկահավաքման ժամանակ կապալառուները շըրջում էին մոնղոլական զինված ուժերի ուղեկցությամբ:

Իրենց աշխատանքից ընթացքում նրանք կրկնակի, եռակի շահագրգովածություն էին ցուցաբերում: Այդ իսկ պատճառով հարկերը հավաքում էին ամենազաժան միջոցներով: Նրանց բրլորովին չէր հետաքրքրում այն հանգամանքը, թե այդ հարկատուն մյուս տարի ի վիճակի կլինի վճարելու պահանջվող հարկերը կամ առհասարակ վճարունակ կլինի, երբ ինքը հարկի անվան տակ վերցնում էր, ավելի ճիշտ հափշտակում էր այն ամենը, ինչ կարող էր: Պատահական չէ, որ նվաճված երկրներում հարկահավաքումը կատարվում էր՝ ընակչության նկատմամբ արտահայտվող դաժանություններով, ծաղը ու ծանակով: Համգալլահ Ղազվինին նշում է, որ հարկերի գանձման կապալային այդ սիստեմը օգուտ էր պետությանը և գանձարանին, որովհետեւ ամրող հարկերը նվաճված երկրներից մեծ մասմբ գանձվում էին այդ ճանապարհով՝ միանգամից և պետական գանձարանը ստանում էր որոշ ամբողջական գումար: Կապալային սիստեմը նոր չարաշահումների ասպարեզ հանդիսացավ նվաճողների համար՝ Հեթում թագավորի կնքած դաշնագրի մեջ շեշտվում է.

¹ Հեթում Պատմիչ — «Պատմութիւն թաթարաց», Վենետիկ, 1842 թ., էջ 43:

«Եւ հայք ազատ լինիցին յամենայն կապալաց եւ յայլոց ծանրութեանց»:¹

Պատմագրության մեջ և վիմական՝ արձանագրություններում պահպանված բազմաթիվ վկայություններ ցույց են տալիս, որ այդ կապալառուները հաճախ հարկից ազատում էին առանձին հարկատունների, նրանց տալով արտօնություններ։ Սա հենց ապացույց է, որ նրանց հավելումն այնքան շատ էր, որ նրանք երբեմն դիմում էին այդպիսի քայլերի։

Ընդհանրապես մոնղոլական պաշտոններության, մասնավորապես՝ հարկանավաքների կատարած կամայականությունների ու դաժանությունների հետևանքով նվաճված երկրները, այդ շարքում նաև Հայաստանը, ամայանում էին, բերրի հողերը անմշակ, անապատ էին դառնում։ Այդ երկրների հողագործ, նստակյաց ժողովուրդը զանազան պատճառներով պակասել էր. ժողովրդի մեծ մասը դիմել էր փախուստի, մնացածները ոչնչով շահագըրդոված չէին հողերը մշակելու։ Գնում էին քաղաք՝ սկագործ աշխատանքի կամ մտնում բանակ՝ ծառայության. ոմանք էլ մտնում էին եկեղեցու հոգանավորության տակ, այն համարելով ավելի ապահով։ Իբն-Բիբին հետևյալ վկայությունն է պահպանել:

«Պետությունը տեսնելով Ախլաթի շրջանի ամայացումը հաշվառում անցկացրեց անհայտ կորածների և սպանվածների»:²

Ժողովրդից վերցնում էին անխոտիր ամեն ինչ. չքավորներից, որոնք չէին կարողանում վճարել պահանջված հարկը վերցնում էին երեխաներին, կանանց կամ իրեն գյուղացուն և հաճախ այդպիսիներին վաճառում ստրկության.

«Եւ որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն...»³

Ֆրիկին վերագրվող երրորդ բանաստեղծության մեջ կարգում ենք.

«Դըրի զիմ որդին գըրաւ,
Ուստի ճուղապ զընալուն,
Միթէ թագաւորն երկնից
Նայ բերէ զիմ որդին ի տուն»:⁴

Մի ուրիշ տեղ նա գրում է.

«Հանց կրակ դընէ ծընօղացն որ
Յաւիտեան երթա մնայ,
Զհայրն ու մայրն կու տանի
Կաթնակեր տղայն տուն մնայ,
Հանց որբէր ետ կու թողա
Որ սար ու ծոր ամէն կուլա,
Ի հիմնէ տուն կու քակէ որ
Այլ իսկի շէն չի մընայ...»⁵

«Զկին եւ ըղտղայքն առնու գերի
Եւ հանց տանի, որ այլ չթափի»:⁶

¹ Гордлевский — „Государство Сельджукидов Малой Азии“, стр. 94.

² Կիրակոս Գանձակեցի, էջ 349.

³ Ֆրիկ, էջ 40, ծանոթության մեջ ենթադրում ենք, որ 229 էջում նույնպես այս տիպի պարագերի մասին է խոսում։

⁴ Ֆրիկ, էջ 45—46.

⁵ Նույն տեղում, էջ 236։

Ուստահան ժողովրդական երգերում կարդում ենք.

«... У кого денег нет, у того

дитя возьмет,

У кого дитяти нет, у того

жену возьмет,

У кого жены нет, у того

головою возьмет".¹

Հարկադրման և, որ գլխավորն է, հարկապահանջման ձևերի ստեղծած հետևանքների մասին մեզ պարզ պատկերացում տալիս են մատենագիրները. ահա նրանց վկայություններից մեկը խաչենցիների մասին.

«...Նեղեալ տեարք նորա յաւերմանէ գաւառին իւրեանց և ի դառն
և վերջին աղքատութենէ։ Որք եկեալ բնակեցան առ մեօք. և սակս
չարաչար կարեաց իւրեանց, որ էին սլարտական այլազգեաց եւ կամէին
դերի վարել, և տաղնապէին ի դառն և յանհնարին աղքատու-
թեանց...»²

Մատենագրության մեջ այնքան շատ են մոնղոլական էպոխան արտացոլող վկայությունները և փաստերը, որ այդ բոլորի մեջքերումը հնարավոր չէ, ուստի բավարարվենք այսքանով։ Ասենք միայն, որ տնտեսական քայլայունն և աշխատավորության համար ստեղծված ծանր վիճակը ժողովրդին ստիպում են թողնել հայրենի հողը, հեռանալ հեռավոր երկըռներ»³

卷之三

Արեւելյան մատենագիրները, այդ թվում նաև հայկական, վկայում են, որ մոնղոլական տիրապետության շրջանում իմունիտետային ինստիտուտը լայն բնույթ է կրել:

Մոնղոլական օրենսգրքում՝ «Յասախ»-ում հիշվում է թարխանային⁴ իմունիտետային ինստիտուտը։ Նրանց հիմնական օրենսգիրքը հանդիսանում է «Յասան», այսինքն զանազան ժամանակներում գրի առնված Զինգիզ-Խանի բանավոր հրամանները—Մարքսի բնորոշումով՝ «ընդհանուր քաղաքացիական և կրոնական օրենք»։⁵

«Ֆեռդալական իրավունքի այդ ձևը,—գրում է Մարքսը,—առաջ է դալիս բոլոր կիսաքաղաքակիրթ ժողովուրդների մոտ՝ կյանքի ռազմատենչ ձևի հիմունքով»⁶

Եթե սկզբնական շրջանում թարթանական խմունիտետով օդտվում էին միայն՝ խոշոր ֆեռզալները, ապա ուշ շրջանում այդ իրավունքով օդտվում էին միջին աղնվականությունը, նույնիսկ հասարակ ծագում ունեցողները:

¹ Материалы к изучению истории СССР, стр. 67.

² Ստեփանես Օրբելյան, էջ 488.

³ Բնակչությունը արտագաղթել է հատկապես Արարատյան դաշտից, Շիրակից, Բագրմանդից, Վանանդից և այլն։ Ամենացայտուն օրինակը Անի քաղաքն արտագաղթն է։

Թարխան՝ հարկից ազատ հոնական ազնվական մի տիտղոս, որից՝ թարխանություն հարկից ազատություն։ Արաբական Տաշա—փառավոր և անվանի ուեխոի անուն է... Այսպիս են կաչվում այն անձերը, որոնք կատարելագետ արտօնյալ են... Մոնղոլական ձախան—հարկից ազատ անձ, վրացերենում թարխանի—ազատ, թարխանոբա—ազատություն։ Աճառյան, Արմատական բառարան. հ. 2, էջ 1152—1153,

⁵ Архив Маркса—Энгельса., т. 5, стр. 220.

⁶ Там же, т. 5, стр. 220.

Անհավանական ենք համարում պըռֆեսոր Յակուբովիսկու այն կարծիքը,¹ թէ Ոսկե Հորդայում իմունիտետ կարող էին ստանալ նրանք, ովքեր ազատ էին հարկերից, որովհետեւ այդ իրավունքի էությունը հենց հարկատվությունից ազատվելուն էր: Գոյություն ուներ թարխանության երկու տարիներում. 1. Մեծ թարխաններ, որոնք ազատ էին անձնական կախումից ու հարկերից և 2. Թարխաններ, որոնք անձնական կախման սեջ էին, բայց ազատված հարկատվությունից:

Այս ճանապարհով առաջ էր գալիս մի նոր արտօնյալ դաս՝ բարձր աղնվականությանը հավասար իրավունքներով: Թարխանական իրավունքը շնորհվում էր բոլոր նրանց, ովքեր խոշոր ծառայություններ էին մատուցել մոնղոլներին, նաև այն հաղատակներին, որոնք խանին մատուցում էին թանկարժեք նվերներ: Այդ իմունիտետը սկզբնական շրջանում տրվում էր խանների, իսկ ավելի ուշ արքայազունների և խանական կանանց կողմից: Բջնի 1358 թվի արձանագրության մեջ կարդում ենք.

«Աստուծածնայ ծառայ... ազատ և թարխան արարի ի հարկէ և ի ծառայութենէ»:²

Իտաշիդ-Ադ-Դինը ասում է, որ Զինգիզ, Օգատա և Կույուկ խանների ժամանակ մոնղոլական արքայազունները և խանական կանայք նողատերերին, պաշտոնեությանը և առետրականներին բաշխում էին հատուկ շնորհագրեր—յառլիկներ (թաթարական հրովարտակ) և փայխզաններ (թղաչափ տախտակ—ոսկուց, արծաթից, չուզունից, փայտից վրան աստծու և խանի անունը գրված),³ որոնք նրանց իրավունք էին տալիս բնակչությունից ստանալու ղանազան ծառայություններ և պարհակներ: Այդ շնորհագրերով արտոնվածները իրենց ամբողջ էությամբ, ամբողջ ծանրությամբ ընկնում էին գյուղացիության և արհեստավորության վրա: Փայխզանները տրվում էին կատարված ծառայության կամ նվիրաբերած պարգևի չափի համապատասխան:

Սմբատ Օրբելյանը թանկագին զոհարը տանում է Մանզու-Խանին որպես նվեր, և խանը նրան ոսկյա փայխզա է տալիս.

«... Եւ հրամայեաց տալ Սմբատայ զոր ինչ և խնդրեսցէ: Եւ հտուն նմա փայխզայ ոսկի որ էր տախտակ ունելով զանուն Աստուծոյ և զարքայի գրեալ յինքեան. և այս էր մեծագոյն պատիւ նոցա...»:⁴ Մաղաքիան, խոսելով Սմբատ սպարապետի մասին, զբում է.

«... Տուեալ մեծ ի առլախ և փայխզայ ոսկիս...»:⁵

Իտաշիդ-Ադ-Դինը վկայում է.

«Վերջապես Խամուշ աթարեկը ներկայացավ, հոյտնելով հպատակություն, նրան տվեցին փայտյա փայխզա և կարմիր տամզա:⁶ Հարկ ենք համարում համառոտակի խոսելու նու մի շարք տերմին»:

¹ Греков և յակубовский—„Золотая Орда“, Ленинград, 1937 г., стр. 82.

² Ծահխարունեանց—«Ասորագրութիւն կաթուղիկէ հջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ», հ. 2, էջմիածին, 1852 թ., էջ 183—184:

³ Թաթարական մի փայխզայի նկար, տես Ղ. Ալիշան—«Սիսական», էջ 93:

⁴ Ստեփանոս Օրբելյան, էջ 410—411:

⁵ Մաղաքիա Արեգա, էջ 16:

⁶ Տազенгаузен В. Г.—„Сборник материалов, относящихся к истории Золотой Орды“, т. II (извлечения из персидских сочинений), 1941 г., Москва-Ленинград, стр. 32.

ների բովանդակության մասին, որոնք Հայաստանի տնտեսական կյանքում նախամոնղոլական և մոնղոլական շրջանում գոյություն են ունեցել։ Այդ արտօնություններ պարունակող տերմիններից շատերը ժառանգություն են մնացել հայ ժողովրդին արարական և սելջուկյան նվաճողներից և իրենց նշանակությունը չեն կորցրել Հայաստանի տնտեսական կյանքում երկար դարեր։ Առաջին և զլիավոր աղբյուրը մեզ համար այդ տեսակետից հանդիսանում է Ստեփաննոս Օրբելյանի Պատմությունը, որի տված տեղեկությունները վերաբերում են մոնղոլների կողմից Հայաստանի նվաճմաննախորդող տասնամյակին և ավելի վաղ շրջանին։

Օրբելյանի մոտ հանդիպում են արտօնությունները նշանավորող տերմիններ։

«Եւ երթեալ¹ յանղիման լինի մեծի արքային Պարսից Մահմուտ Սուլտանին, ծանօթանայ նմա և առնու ի նմանէ փարման² և մանշուր³ վասն տեղւոյն այնմ։ Համարձակ բնակէ ի նմա։»

Փարման իրավունք ունեին տալու ոչ միայն սուլթանը, շահը կամ խանը, այլ և աթարեկները։

Ստեփաննոս Օրբելյանի մոտ կարդում ենք.

«...Եւ հաստատեալ զնա (Ստեփաննոս եպիսկոպոսը) տուն աթոռոյ եպիսկոպոսութեան՝ առնու փարման և սիդէլ ի մեծ Աթարէկէն⁴ վասն վիճակիս այսր զի ի նմա ժառանգեցեն ժառանգործք սուրբ եկեղեցւոյն»։⁵

Այս մի քանի տերմինների բացատրությունը տալիս ենք ըստ Ստեփաննոս Օրբելյանի։

«...Եւ պատուէին զնա (Ստեփաննոսին) տուզբայիւ զրոյ՝ և փարմանաւ և մանշուրաւ զոր մեք սիդէլ⁶ կոչեմք...»։⁷ Եւ այլն։

Այս փաստը վկայում է, որ բոլոր նվաճող ժողովուրդները այս ճանապարհով կարողանում էին իրենց համար համախոններ շահել նվաճված ժողովուրդների իշխող դասակարգի և հոգեորականության շարքերում, վերջիններիս դարձնելով գործիք՝ ապահովելու համար իրենց տիրապետությունը նվաճված երկրներում։

Մեր ձեռքի տակ եղած աղբյուրների ուսումնասիրությունը բերում է

¹ Հովհաննավանքի եպիսկոպոս Հովհաննեսը—Ստեփաննոս Օրբելյան, էջ 347։

² Փարման—Փիրման—հրաման, հրամանագիր, արքայական հրովարտակ։ Նորագյուղ բառ, պարուկական բարո—հրաման։ Անառյան, «Արմատական բառարան», համար 2-րդ, էջ 1182։

³ Մանշուր—հրովարտակ, արարական տանշուր—հրովարտակ, Անառյան, նույն տեղում համ. 5, էջ 823։

⁴ Ստեփաննոս Օրբելյան, էջ 348։

⁵ Ելտկուզից—Ստեփաննոս Օրբելյան, էջ 351։

⁶ Նույն տեղում։

⁷ Թուրքական արքունի նշանագիր, զինանշան—թուրքական լուց, գավառական լուց—թաթարական լուց—Սուլթանի փակտգիր ստորագրությունը։ Անառյան, «Արմատական բառարան», համ. 7-րդ, էջ 972։ «Սուլթանական փաստաթղթերը, նվիրատվությունների հրովարտակները, ակտերը, պայմանագրերը վավերացվում էր կնիքով՝ տուրով, կնիքի դրումը, կնիքեր վերջին դիմավոր էտապն էր դիմանում, փաստաթղթի ձևակերպման համար» Գործեական (վերը նշանած աշխատության մեջ), стр. 139։

⁸ Սիգիլ—հրաման, կնիք, լատիներեն—sigillum—կնիք, հունարեն sigillon—կայսերական հրամանագիր, Անառյան, համ. 7-րդ, էջ 220։

⁹ Ստեփաննոս Օրբելյան, էջ 342։

այն համոզման, որ մօնղոլական էպոխայում Հայաստանում գանձվում էին բազմաթիվ հարկեր, որոնցից հաջողվեց պարզել միայն հետևյալները. հողային հարկ, գլխահարկ, անասնահարկ, գույքային հարկ, քաղաքային հարկ, մաքս, պաշարեղենի հարկ, արոտատեղիների հարկ, բանակի պահպանման հարկ, զինվորական հարկ, կոռ ու բեզար և այլն։ Մի խոսքով այն ամենը, ինչ հնարավոր էր, հաճախ նույնիսկ անհնար էր հարկման՝ հարկադրում էին, որը և կազմում էր հարկի կամ տուրքի առանձին տեսակ։

A 330/0

24178



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033010

(204)

A II
33010